ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԿՈՄՄԱԳԵՆԵԻ ԵՎ ԾՈՓՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՄԱՐԳԱՐՅԱՆ Ե. Հ.

Կոմմագենեն ոչ մեծ լեռնային երկիր էր՝ Եփրատի աջ ափին, Մեծ Հայքի անմիջական հարևանությամբ: Հյուսիսում եզերված էր Տավրոսի լեռնաշղթայով, արևմուտքում՝ Ամանոսի լեռներով և Կիլիկիայով: Արևելքում Եփրատն էր, իսկ հարավում՝ Ասորիքը: Երկրի քաղաքական և մշակութային կենտրոնը Սամոսատն էր՝ իր անառիկ ամրոցով, որը XX դ. Աթաթյուրք Բարաջի ջրանցքի կառուցման ժամանակ սուզվել է ջրի տակ:

Հնում Կոմմագենեն տարածաշրջանի տնտեսապես առավել զարգացած երկրներից էր: Ընդերքը հարուստ էր օգտակար հանածոներով: Տավրոսի լեռներում արդյունահանում էին երկաթի հանքաքար, գորշ ածուխ (լիգնիտ), գիպս, Եփրատից ոսկեբեր ավազ և նավթ հանում: Հարուստ և բազմազան էր Կոմմագենեի բուսական աշխարհը: Լեռների լանջերը ծածկված էին սաղարտախիտ անտառներով, որոնք մասամբ պահպանվեցին մինչև անցյալ դարի սկիզբը: XIX դ. այդ երկիրն այցելած գերմանացի ճանապարհորդը այսպես է նկարագրում այն. «Կաղնիները և սոսիները ծածկում են լեռնալանջերը: Դաշտավայրերում ամենուրեք սփռված են թզենիներ, ձիթենիներ, ընկուզենիներ, նռնենիներ, խաղողի վազեր, դափնեվարդի թփեր, ոչ մի տեղ արտերն այնքան առատ բերք չեն տալիս»[1]: Այդ նկարագրությունը թերևս հիշեցնում է դրախտային պարտեզը: Սակայն այսօր՝ ընդամենը մեկ դար անց, այդ երկիրը քիչ է նման պարտեզի: Ծառերը վաղուց հատվել են, իսկ այծերն ու ոչխարները ոչնչացրել են բուսականության վերջին նշույլները:

Հնագույն ժամանակներից Կոմմագենեն գտնվել է տարանցիկ առևտրի ճանապարհների խաչմերուկում՝ կապելով Արևելքն ու Արևմուտքը: Տավրոսի լեռնանցքերի վերահսկումը, ինչպես նաև Եփրատի կամուրջների և գետանցների վրա տեղադրված մաքսակետերը Կոմմագենեի տիրակալներին բարձր եկամուտներ էին ապահովում և հնարավորություն ընձեռում հսկողություն սահմանել Փոքր Ասիայի և Միջագետքի միջև իրականացվող ապրանքափոխանակության նկատմամբ: Բացի այդ, միշտ քաղաքական չեզոքության ձգտող Կոմմագենեն հաճախ առևտրային միջնորդի դեր էր կատարում ավանդական թշնամիների՝ պարթևների և հռոմեացիների միջև: Կոմմագենեն և հարևան Կիլիկիան այն երկրներն էին, որտեղ առանց խոչընդոտների կարող էին միմյանց հետ հարաբերվել հույները, հռոմեացիները, արաբները, հայերը և պարթևները:

Ք.ա. մոտ 605 թ. Կարքեմիշի հարևանությամբ, հետագայիս երկրի մայրաքաղաք Սամոսատի տեղում, Բաբելոնի թագաժառանգ Նաբուգոդոնոսորը վերջին ճակատամարտը տվեց Ասորեստանյան ու եգիպտական միացյալ բանակներին: Այդ ժամանակվանից սկսած՝ Կոմմագենեն հայտ-

[1] *http://www.nemrud.nl/en/hs_tekst1.asp*

նըվում է Բաբելոնի, իսկ Ք.ա. 550 թ. անցնում է Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ներքո:

Աքեմենյան տիրապետության շրջանում Կոմմագենեն և Մեծ Հայքը միավորվեցին մեկ սատրապության մեջ[2]: Հետազոտողների կարծիքով, Ք. ա. մոտ 518 թ. Դարեհ Ա-ի կատարած վարչական վերափոխումների հետևանքով, Կոմմագենեն հայտնվեց արևմտահայկական, այդպես կոչված, 13-րդ սատրապության կազմում: Սակայն Քսենոփոնի «Բյուրուց նահանջի» ժամանակ 13-րդ և 18-րդ սատրապությունները պետք է որ արդեն ամփոփված լինեին մեկ կիսանկախ վարչական միավորման մեջ[3]: Բայց Աքեմենյան տերության անկումը և դրան հաջորդած խառնակ դարաշրջանը հանգեցրին արդեն ավանդական դարձած տնտեսական, էթնոմշակութային և այլ կապերի թուլացմանը, սկզբում՝ կայսրության առանձին երկրների միջև, իսկ հետո՝ նաև դրանց ներսում: Հայաստանը բացառություն չկազմեց: Այստեղ նույնպես ծայր առան կենտրոնախույս նկըրտումներ, որոնք խրախուսվում և խթանվում էին արտաքին ուժերի, հատկապես Սելևկյանների կողմից: Դրա հետևանքով մեկը մյուսի հետևից Մեծ Հայքի թագավորությունից սկսեցին անջատվել սահմանամերձ երկրամասերը: Ինչպես հայտնի է, առաջինը Հայաստանից անջատվեց Փոքր Հայքը, որը մինչ այդ կազմում էր Արևմտյան Հայաստանի մի մասը: Դա տեղի ունեցավ Ք. ա. 323 թ., դիադոխների՝ Բաբելոնի ժողովից հետո, որտեղ մակեդոնական զորավար Պերդիկասին հանձնարարվեց գրավել Կապադովկիան, Պափլագոնիան և Պոնտոսը: Պերդիկասը հաջողությամբ իրագործեց այդ հանձնարարականը, որի հետևանքով վերոհիշյալ երկրները միացվեցին Մակեդոնական կայսրությանը: Պերդիկասի գրաված տարածքներում կառավարիչ նշանակվեց Եվմենոսը, որն իր զորավար Նեոպտոլեմոսին ուղարկեց Փոքր Հայք՝ այնտեղ մակեդոնական վարչակարգը հաստատելու համար: Սակայն փորձը ցույց տվեց, որ դա իրագործելն ավելի դժվար էր, քան կարող էր թվալ առաջին հայացքից: Ինչպես վկայում է Դիոդորոսը[4], Նեոպտոլեմոսի բիրտ վարքագիծը զայրույթ առաջացրեց հայերի մեջ, և նրանք ապստամբեցին. միայն փորձառու և ճկուն Եվմենոսի միջամտությունից և հայերի պահանջներից շատերը բավարարելուց հետո հաջողվեց մեղմել իրավիճակը և խուսափել զինված ընդհարումներից: Այսպիսով Փոքր Հայքը դարձավ Հայաստանից անջատված առաջին երկրամասը: Իրավիճակը չփոխվեց նաև Ք. ա. 321 թ., Պերդիկասի և,

---

[2] Դրա անուղղակի վկայությունը գտնում ենք Անտիոքոս Ա Կոմմագենացու՝ Նեմրուդ լեռան հայտնի վիմագրության մեջ: Անտիոքոս Ա-ի թագավորական նախնիների շարքում այստեղ հիշատակված է Արոանդ-Երվանդը՝ Արտաքսերքս Մնեմոնի փեսան: Դրա հիման վրա Գ. Տիրացյանը հետևություն է արել, որ Արոանդա-Օրոնտես-Երվանդը միաժամանակ իշխել է Հայաստանի և ողջ Կոմմագենեի վրա [**Тирацян Г. А.,** ***Страна Коммагена и Армения*** *(ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր հաս./գիտ., 1956, N 3);* **Саркисян Г. Х.,** ***Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, М.,*** *1960, с. 34;* **Սարգսյան Գ.,** Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Ե., 1966, էջ 29, 71]:

[3] **Սարգսյան Գ.,** նշվ. աշխ., էջ 72:

[4] **Diod.,** *XXXI, 19.*

ավելի ուշ, Եվմենոսի սպանվելուց հետո: Սրանց փոխարինելու եկան Սելևկյանները:

Ինչ վերաբերում է Հայաստանի մյուս երկու մերձեփրատյան երկրամասերին՝ Ծոփքին և Կոմմագենեին ու, թերևս, Եկեղիք գավառի մի մասին, ապա դրանք Մեծ Հայքից անջատվել են ավելի ուշ, մոտավորապես Ք.ա. III դ. 70-60-ական թթ. (նույնպես ոչ առանց Սելևկյանների միջամտության): Անկախանալով՝ դրանք Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասում կազմեցին միացյալ Ծոփք-Կոմմագենյան թագավորություն՝ սկզբում Սամոսատ, իսկ հետո Արշամաշատ մայրաքաղաքով: Այդ պետության իշխող արքայատոհմը դարձավ Երվանդակաների արևմտյան ճյուղը:

Վերածնված Երվանդակաների արքայատոհմն առաջին իսկ օրվա- նից ստիպված էր համառ պայքար վարել Սելևկյան թագավորության նկրտումների դեմ: Նրանք ակտիվ դերակատարություն ունեին հակասելևկյան դաշնության մեջ, որը սկսել էր ձևավորվել դեռևս Ք. ա. III դ. սկզբներին: Նույն դարի առաջին կեսին Հայաստանն ու փոքրասիական մի շարք երկրներ հայտնվեցին միասնական իրավական-քաղաքական դաշտում, որը կոչված էր ապահովել նորաթուխ թագավորությունների իշխանության օրինականությունը: Դա արտահայտվում էր նորաստեղծ թագավորությունների՝ միմյանց ճանաչման և խնամիական փոխադարձ կապերի հաստատման մեջ: Պակաս կարևոր չէր նոր արքայատների տոհմածառերի և սեփական տոմարների ստեղծումը: Այսպես, Մերձսևծովյան ավազանում աստիճանաբար լայն տարածում է ստանում Բյութանիական թագավորական տոմարը: Նույն կարգի երևույթներից էր նաև կոմմագենյան Եր-վանդակաների տոհմածառի և ուրույն տոմարի մշակումը: Այդ իրավաքաղաքական դաշտի մեջ մտնելը, նորաստեղծ պետությունների համար ընդամենը առաջին քայլն էր, հաջորդը Սելևկյան տիրակալների կողմից նրանց իշխանությունն ընդունելն էր: Այդ նպատակով տեղական դինաստները ձգտում էին խնամիական կապեր հաստատել նաև Սելևկյան արքայատան հետ և կենցաղում հնարավորինս նմանվել նրանց: Սելևկյան տիրակալների կողմից տեղական դինաստին դստերը կնության տալը նշանակում էր նրա ճանաչումն իբրև օրինական իշխողի: Սակայն նման բան հնարավոր էր միայն տեղական թագավորների կողմից հելլենիստական բարքերն ընդունելու և յուրացնելու դեպքում. դա պարտադիր պայման էր: Բացի այդ, Սելևկյան արքայադուստրերը ամուսինների պալատներ էին տեղափոխում իրենց նախնիների սովորույթներն ու բարքերը: Այդ ամենը լրացուցիչ խթան էր տեղի վերնախավի մեջ հելլինիզմի արմատավորման և զարգացման համար: Հետագայում արևելյան տիրակալները փիլիսոփայական տեսություններ էին մշակում իրենց իշխանությունը հիմնավորելու համար:

Ինչպես երևում է Անտիոքոս Ա Կոմմագենացու նեմրուդյան վիմագրություններից, Արոանդա-Երվանդ թագավորից հետո (ըստ երևույթին իշխել է Ք.ա. III դ. առաջին տասնամյակներին) Մեծ Հայքում գահակալում է ոմն -*անեսը* (արձանագրության մեջ այս անվան առաջին երկու տառերը վնասված են և չեն ընթերցվում): Այդ թագավորի մահվանից հետո կամ նրա կյանքի վերջին տարիներին Հայաստանից անջատվել է

Ծոփք-Կոմմագենյան երկրամասը, որի առաջին թագավորը դարձավ Սամոսը (Շամ) (Ք. ա. մոտ 260-243 թ.): Վերջինս համարվում է արևմտյան Երվանդականներին հարստության հիմնադիրը: Մենք քիչ բան գիտենք Ծոփք-Կոմմագենյան թագավորության պատմության այդ շրջանի մասին: Հայտնի է որ Ք.ա. III դ. կեսերին Սամոսը կառուցել է Սամոսատը՝ Կոմ-մագենեի ապագա մայրաքաղաքը: Աղբյուրներում առաջին անգամ այդ քաղաքը հիշատակվում է Ք.ա. 245 թ., Էրատոսթենոսի աշխատության մեջ[5]: Շամշատ-«Սամոսատա» նշանակում է «Արևի քաղաք» (որը թերևս պայմանավորված է այդ տարածաշրջանում արևապաշտության հին ավանդույթներով): Որոշ ժամանակ քաղաքը կոչվել է նաև Կոմմագենեի Անտիոք *(Αντιόχεια η Κομμαγηνή)*, թերևս այն պատճառով, որ դարձել էր հելլենիստական մշակույթի խոշոր կենտրոն և լուրջ մրցակից էր Ավագ Անտիոքին:

Սամոսատը նաև խոշոր առևտրատնտեսական կենտրոն էր, որը հիմնականում պայմանավորված էր քաղաքի նպաստավոր աշխարհագրական դիրքով (առհասարակ քաղաքի ընտրության հարցում Երվանդականները հավասարը չունեին): Երվանդականները Սամոսատի տեղն ընտրել էին այնպես, որ հնարավոր լիներ հսկել Եփրատի վրայով արևելքից արևմուտք անցնող առևտրային ճանապարհները: Այն նաև եղել է Դամասկոսից, Պալմիրայից և Սիրայից դեպի Փոքր Հայք և Եվքսինյան ծով տանող ճանապարհների հարաբերման կայան: Սամոս արքան Ծոփքի արևելյան մասում կամ, հնարավոր է՝ նույնիսկ Եկեղիքում՝ Եփրատի աջ ափին, կառուցել է ևս մի քաղաք, որը վաղ բյուզանդական աղբյուրներում հայտնի է Սամոկարտա (Սամոքարտ) անվամբ:

Սամոսին հաջորդել է իր եղբորորդի Արսամեսը (Արշամ) (Ք.ա. մոտ 243-226 թթ.): Անտիկ աղբյուրներում պահպանվել է այդ թագավորի ընդամենը մեկ հիշատակություն. III դ. հեղինակ Պոլիենոսը, նկարագրելով նշանավոր զորավարների սխրանքները, պատմում է այն մասին, թե ինչպես Անտիոքոս Հիերաքսը՝ Սելևկոս Բ Կալլինիկոս թագավորի եղբայրը, փորձել է գրավել Ասորիքի գահը: Սակայն Միջագետքում եղբորից պարտություն կրելուց հետո (Ք.ա. մոտ 230 թ.) նա ստիպված եղավ իր զորքի մնացորդներով ապաստան փնտրել իր հարևան և բարեկամ հայոց արքա Արսաբեսի (*Άρσάβης*) մոտ[6]: Հետազոտողներից շատերը, ի դեմս այդ հայոց արքայի, տեսնում են Ծոփք-Կոմմագենյան թագավորության տիրակալ Արսամեսին[7]: Վերջինս այս տարածաշրջանի ոչ մեծ հելլե-

---

[5] Տե՛ս **Memnon,** *History of Heracleia, 14; Athenaeus, Deipnosophistae, II, 58; Pompeius Trogus, Prologi, 27; Stephanus, Ethnica, s.v. "Ziela"*: Էրատոսթենոսը պատմում է, որ Նիկոմեդես Ա-ի մահվանից հետո նրա երկրորդ կինը՝ Էտազետան գրավեց իշխանությունը Բիթանիայում, անտեսելով իր անչափահաս զավակի՝ Զիաելոսի իրավունքները: Վերջինը, չափահաս դառնալով, Ք.ա. 260 թ. հեռացավ երկրից և ապաստան գտավ Սամոս «սատրապի» Սամոսատի պալատում: Սակայն քիչ ժամանակ անց նա վերադարձավ հայրենի երկիր՝ գաղատացիների օգնությամբ վերականգնելով իր իրավունքները գահի նկատմամբ *(այս մասին տե՛ս* **Getzel M. Cohen,** *The Hellenistic Settlements in Europe, the Islands, and Asia Minor, Berkeley, 1996):*

[6] **Polaeni,** *Strategematicon libriocto, IV, 47.*

[7] **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Ե., 1977, էջ 112:

նիստական պետությունների իշխողների պես շահագրգռված էր սելևկյան տերության թուլացմամբ և անում էր հնարավոր ամեն բան այդ նպատակին հասնելու համար: Անտիոքոս Հիերաքսին օգնելու մասին Պոլիենոսի պատմական ակնարկը դրա վառ օրինակներից մեկն է: Իր նախորդի նման Արսամեսը շինարարական եռանդուն գործունեություն էր ծավալել թե՛ Ծոփքում, թե՛ Կոմմագենեի տարածքում: Ծոփքի և Եկեղիքի սահմանագլխին նա կառուցում է իր պետության նոր մայրաքաղաքը՝ Արշամաշատը: Բացի այդ, Կոմմագենեում նա կառուցել է իր անունը կրող ևս երկու քաղաքներ՝ Եփրատի և Նիմփայոսի Արսամեաները: Այսպիսով՝ Արսամեսն իշխել է դեռևս միացյալ Ծոփք-Կոմմագենյան թագավորությունում: Արշամը աջակցել է Սելևկոս Բ-ի եղբորը՝ գահի անհաջողակ հավակնորդ Անտիոքոս Հիերաքսին:

Սակայն մեզ հայտնի հաջորդ Երվանդական Արշամի որդի ու թերևս Կոմմագենեի թագավոր Սամոսի եղբայր Քսերքսեսը (գահակալել է մինչև Ք.ա. 212 թ., առաջին անգամ հիշատակում է Պոլիբիոսը)[8] արդեն եղել է միայն Ծոփքի թագավոր: Այսօր դժվար է որոշել, թե երբ է Կոմմագենեն անջատվել Ծոփքից: Բանն այն է, որ Անտիոքոս Ա-ի՝ Նեմրուդ լեռան արձանագրություններում Արսամեսի հիշատակությունից հետո կա մեծ բաց, սակայն Պոլիբիոսը, Քսերքսեսի հետ միաժամանակ, Ք.ա. 212 թ. հիշատակում է ոմն Սամոսի, որի գահանիստը Արշամաշատն էր: Վերջինս հատել է դրամներ, որոնք խիստ տարբերվում են ծոփք-կոմմագենյան թագավոր Արշամ-Արսամեսի կտրած դրամներից: Դա հետազոտողներին առիթ տվեց ենթադրելու, որ Կոմմագենեի անջատումը Ծոփքի թագավորությունից տեղի է ունեցել հենց այդ ժամանակ[9]: Իսկ Կոմմագենեում իշխող դարձավ արևմտյան Երվանդականների շառավիղը:

Քսերքսեսի իշխանության տարիներն անամպ չէին և համընկան Ասորիքի թագավորության աննախադեպ հզորացման շրջանի ու Անտիոքոս Գ Սելևկյանի արևելյան արշավանքների հետ: Ըստ Պոլիբիոսի, Ծոփքի թագավոր Քսերքսեսը առաջիններից էր, որը ենթարկվեց Անտիոքոս Գ-ի հարձակմանը: Խուսափելով սելևկյան հզոր և մեծաքանակ բանակի հետ առճակատումից՝ Քսերքսեսը լքում է մայրաքաղաքը և յուրայինների հետ պատսպարվում իր երկրի բարձրլեռնային անառիկ ամրոցներից մեկում: Անտիոքոսը, գիտակցելով, որ այդ ամրոցի (միգուցե՝ նույնիսկ ամրոցների) գրավումն իրենից կպահանջի շատ ջանք և ժամանակ ու կարող է արշավանքի հենց սկզբում վտանգի տակ դնել իր ծավալապաշտական ծրագրերը, հարկադրված եղավ զիջումների դիմել: Նա Քսերքսեսին առաջարկեց իջնել լեռներից և հաշտություն կնքել Ծոփքի տիրակալի համար ամենահարմար պայմաններով: Թեև դա վտանգավոր էր, ըստ երևույթին, ուրիշ ելք չտեսնելով, յուրայինների ճնշման տակ, Քսերքսեսը ստիպված

---

[8] *Polyb., VIII, 25.*

[9] **Hummann K. und Pushstein O.,** *Reisen in Kleinasien und Nordsyrien. Textband. Berlin, 1890;* **Honigmann E.** *Kommagenem (Pauly-Wissowa, Realencyclopaedie der klassischen Altertumswissenschaft, Pauly-Wissowa, Realencyclopaedie der klassischen Altertumswissenschaft, S. IV, 1924);* **Reinach Th.,** *La dinastic de Commagene (L .Historie par les Monnast), Paris, 1890, p. 240;* **Тирацян Г. А.,** նշվ., աշխ., էջ 74; **Սարգսյան Գ.,** Անտիոքոս Գ Սելևկյանը և Հայկական պետությունները (Բանբեր Երևանի համալսարանի, 1969, N 1, էջ 48-49):

եղավ ընդունել Անտիոքոսի առաջարկը: Նույն Պոլիբիոսը վկայում է, որ Անտիոքոսի մերձավորները վերջինիս դրդում էին դրժել խոստումը և, օգտվելով հարմար առիթից, կալանքի տակ առնել Ծոփքի անհնազանդ տիրակալին: Փոխարենը նրանք առաջարկում էին Ծոփքի թագավոր կարգել Անտիոքոս Գ Սելևկյանի քրոջ որդուն՝ Միհրդատին[10], որի հայրը, Գ. Սարգսյանի կարծիքով, հայ մեծատոհմիկ էր, թերևս Երվանդականների տոհմից[11]: Սակայն Անտիոքոսը ոչ միայն չհետևեց իր խորհրդականների հորդորներին, այլև ընդհակառակը, Քսերքսեսին վերահաստատեց Ծոփքի գահին և վերջինիս կնության տվեց իր քրոջը՝ Կլեոպատրային, որով «ոգևորեց տեղի բնակիչներին և գրավեց նրանց համակրանքը՝ ցուցադրելով, թե ինքը որքան մեծահոգաբար և թագավորավայել է վարվում»[12]:

Անտիոքոս Գ-ի մեղմ և զիջողական դիրքորոշումը Ծոփքի տիրակալի նկատմամբ առաջին հայացքից կարող է զարմանալի թվալ. չէ՞ որ Անտիոքոս Գ Սելևկյանի հետ խնամիանալը և վերջինիս դաշնակից դառնալը նշանակում էին Քսերքսեսի՝ առանց այդ էլ բավականին ուժեղ դիրքե- րի ամրապնդում: Սակայն Անտիոքոսն ուներ հեռահար ծրագրեր, և Քսերքսեսի նկատմամբ նրա ժամանակավոր «զիջողականությունը» չի կարելի պատահականություն համարել, «տվյալ պահին դա իսկապես մտածված քաղաքականություն էր»[13]՝ ուղղված արևելյան արշավանքից առաջ Սելևկյանների թիկունքն ապահովելուն: Ք.ա. 212 թ. Անտիոքոսի ձեռնարկած Արևելյան արշավանքը պսակվեց հաջողությամբ: Ք.ա. 201 թ. վերադառնալով Անտիոք՝ նա որոշում է ավարտել շուրջ մեկ տասնամյակ առաջ սկսած գործը՝ վերջնականապես իր իշխանությանը ենթարկելու Մեծ Հայքը, Փոքր Հայքը, Ծոփքն ու Կոմմագենեն: Այդ ժամանակ նա իր քրոջը՝ Կլեոպատրային, հրամայում է թունավորել ամուսնուն, որը և արվում է: Դավադրաբար սպանված Քսերքսեսի փոխարեն Սելևկյան թագավորը հայազգի Զարեհ-Զարիադրեսին կարգում է Ծոփքի ստրատեգոս, իսկ Կոմմագենեում՝ ոմն Պտղոմեոսի (201-163) (Πτολεμαίος): Պտղոմեոսը էպիստատոսի կարգավիճակում երկիրը կառավարեց Սելևկյան Անտիոքոս Գ Մեծ, Սելևկոս Դ Ֆիլոպատոր, Անտիոքոս Դ Եպիփանես և Անտիոքոս Ե Եվպատոր թագավորների օրոք: Ք.ա. 163 թ. սպանվեց Անտիոքոս Դ-ն, որից հետո Սելևկյան պետությունը սկսեց արագորեն կազմալուծվել: Օգտագործելով հարմար առիթը՝ Պտղոմեոսն իրեն անկախ հռչակեց: Ք. ա. 162 թ. Դիոդորոս Սիկիլիացին Պտղոմեոսին հիշատակում է արդեն իբրև Կոմմագենեի ինքնակալ[14], իսկ Սամոսատը՝ իբրև երկրի մայրաքաղաք:

Հետազոտողներից շատերը կարծում են, որ Պտղոմեոսի օրոք Երվանդականների հարստությունը Կոմմագենեում, ինչպես և ուրիշ հայկական երկրամասերում, ընդհատվել է, և Պտղոմեոսը մի սովորական մակեդոնա-

---

[10] *Polyb., VII, 23 (25), 23.*
[11] **Սարգսյան Գ.,** նշվ. աշխ., էջ 48, Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Ե., 1971, էջ 524:
[12] *Polyb., VII, 23 (25), 25.*
[13] **Սարգսյան Գ.,** նշվ. աշխ., էջ 47:
[14] **Diod.**, *XXXI, 19a.*

կան հրամանատար էր՝ նշանակված Կոմմագենեում նույնիսկ ոչ թե ստրատեգոսի, այլ ընդամենը էպիստատոսի պաշտոնում: Հատկանշական է, որ, ի տարբերություն Մեծ Հայքի և Ծոփքի կառավարիչների, որոնք թերևս ազգակցական կապ ունեին Երվանդականների հետ, Պտղոմեոսը Մագնեսիայի մոտ Սելևկյանների ջախջախումից հետո չվճռեց իրեն թագավոր հռչակել: Փաստացիորեն լինելով Սելևկյաններից անկախ, արդեն Ք.ա. 189 թ.՝ նա իրեն թագավոր հորջորջեց միայն 162 թ.: Բացի այդ, Անտիոքոս Գ Սելևկյանի համար անիմաստ կլիներ մեկ Երվանդականին փոխարինել մյուսով, քանի որ մեծ էր հավանականությունը, որ լինելով տեղական արքայատան ներկայացուցիչ՝ նա, վաղ թե ուշ, հենվելով երկրի ներքին ուժերի (հատկապես աշխարհաժողովի) վրա, թագավոր կհռչակվեր և կանկախանար: Մինչդեռ Սելևկյան դրածոները, ժողովրդի աչքում լինելով անօրինական իշխաններ՝ կարող էին ապավինել միայն իրենց սյուզերենին: Սակայն մի խումբ հետազոտողներ, հենվելով Անտիոքոս Ա-ի թողած արձանագրությունների վրա, Պտղոմեոսին համարում են Երվանդական տան շառավիղ[15]: Դա ևս բացառված չէ՝ հաշվի առնելով այս տարածաշրջանում դեռևս Աքեմենյանների օրոք տարածում գտած սովորույթը՝ վասալ թագավորներին սյուզերենի արքայատանը կապել դինաստիական ամուսնություններով: Արտաշեսը, Զարեհը և Պտղոմեոսն իսկապես կարող էին ազգակցական թեկուզ և հեռավոր կապեր ունենալ Երվանդական հարստության հետ: Ստույգ հայտնի է նաև, որ Պտղոմեոսը Միհրդատ Ա Պարթևացու ազգականն էր:

Պտղոմեոսը մահացել է Ք.ա. 130 թ.: Անմիջապես իր մահվանից հետո Կոմմագենեի գահին մենք կրկին տեսնում ենք արևմտյան Երվանդականների տոհմական անունը կրող թագավորի՝ Սամոս Դիկեյոս Թեոսեբիոսին (Ք.ա. մոտ 130-109 թթ.), որն, ըստ ամենայնի, վերականգնել է ընդհատված Երվանդական արքայատոհմը Կոմմագենեում[16]:

Սակայն կոմմագենյան գահի թերևս ամենավառ անհատականություններից մեկը Միհրդատ Ա Կալլինիկոսն էր (Ք.ա. 109-70 թթ.): Իր երկրում նա մեծ ժողովրդականություն էր վայելում: Հելլենիստական դարաշրջանի շատ երկրների նման Կոմմագենեն ուներ բազմազգ և տարասեռ բնակչություն: Տեղի ժողովուրդները խոսում էին տարբեր լեզուներով, ունեին զանազան ավանդույթներ և սովորույթներ: Դեռևս չձևավորված ազգային ինքնության պայմաններում համայնական և տոհմային փոխհարաբերությունները շարունակում էին պահպանել առանցքային նշանակություն: Նոր արքա Միհրդատ Ա Կալլինիկոսն իր առջև նպատակ էր դրել ձևավորել կոմմագենյան սոցիումի նոր ինքնություն, որի համար նախաձեռնեց մի շարք կարևոր միջոցառումներ: Դասական դարաշրջանում մասնատված Հունաստանում ազգը միավորող կարևոր գաղափարախոսական գործիքներից էին օլիմպիական խաղերը, որոնց ժամանակ ընդհատվում էին պառակտիչ պատերազմները, և հելլենները իրար էին հանդիպում Օլիմպոս լեռան ստորոտներում՝ համահունական խաղերին մասնակցելու համար: Միհրդատը, իր ժողովրդականությունն ապահո-

---

[15] *Տե՛ս* **Chahin M.** նշվ. աշխ., *The Kingdom of Armenia, Routlege, 2001, p. 190-191.*

[16] **Տիրացյան Գ.,** նշվ. աշխ.:

վելու համար, յուրաքանչյուր տարի իր նախնիների պատվին Կոմմագենեում կազմակերպում էր օլիմպիական խաղեր: Երիտասարդ տարիներին Միհրդատը մասնակցել էր այդպիսի խաղերի և միշտ եղել էր հաջողակ, որտեղից էլ ստացել էր Կալլինիկոս՝ «Գեղեցիկ հաղթող» մականունը: Այդ հաղթանակները մեծ համբավ և ժողովրդականություն բերեցին Միհրդատին: Առավել կարևոր նշանակություն ունեցավ նոր կրոնական համակարգի ձևավորումը: Այն հիմնված էր նախնիների պաշտամունքի և արդիականացված զրադաշտականության վրա, սակայն նոր կրոնական համակարգի առավել կարևոր տարրերից էր Միհրի պաշտամունքը: Այդպիսով, Կոմմագենեում ստեղծվել էր վերցեղային, վերէթնիկ գաղափարախոսական մի համակարգ՝ խարսխված զրադաշտականության և հնագույն արիական հոգևոր ավանդույթների վրա:

Դեռևս երիտասարդ տարիքում Միհրդատն ամուսնացել էր Լաոդիկե *(η Λαοδίκη)* Է Թեայի հետ (ծնվ. Ք.ա. 122 թ.), որը Սելևկյան Անտիոքոս Ը Գրիպոսի և Պտղոմյան տան արքայադուստր Տրիփաենեի դուստրն էր *(Κλεοπάτρα Τρύφαινα)*: Այդ ամուսնությունից, Ք.ա. 86 թ., ծնվել է Անտիոքոս Ա-ն (իշխել է Ք.ա. 70-38), թերևս Միհրդատի միակ որդին և թագաժառանգը: Իր անունն Անտիոքոսը ստացել է ի պատիվ մայրական գծով իր պապի: Այսպիսով, Անտիոքոս Ա-ն մայրական կողմից Ասորիքի առաջին հունամակեդոնական թագավոր Սելևկիոս Ա Նիկատորի և Եգիպտոսի Պտղոմեոս Ա Սոտերի ուղիղ շառավիղն էր: Միհրդատի և Լաոդիկեի ամուսնությունը փոխշահավետ էր: Օրեցօր թուլացող Սելևկյան թագավորությունը, ենթարկվելով Հռոմեական պետության և Պարթևստանի հուժկու ճնշմանը, դաշնակիցների խիստ կարիք ուներ: Նախկինում Ասորիքի թագավորության կողմից մշտական ագրեսիայի առարկա հարևան երկրներն այժմ հայտնվեցին Սելևկյանների հետ միևնույն հարթության վրա: Միհրդատ Կալլինիկոսը Լաոդիկեի արքայադստեր միջոցով հաղորդակից դարձավ հունական բարձր մշակույթին և տեղ գտավ սելևկյան արքայատան տոհմածառի վրա:

Անտիոքոսն ամուսնացած էր սելևկյան արքայադուստր Պյութոդորիսի (Իսիս Փիլոստորգոս) հետ (Ք.ա. 150 թ.), որին իր արձանագրության մեջ ակնածանքով անվանում է «սիրելի»: Վերջինից նա ունեցել է երեք զավակ. Միհրդատ Բ Կոմմագենացին, որը հոր մահվանից հետո ժառանգել է Կոմմագենեի գահը, Անտիոքոս Բ-ն՝ սպանված Ք.ա. 29 թ., Օգոստոս կայսեր հրամանով և դուստրը՝ Լաոդիկեն՝ ամուսնացած պարթևաց Հորոդես Բ-ի հետ:

Հայտնի է, որ Ծոփքը (Ք.ա. 93 թ.) և Կոմմագենեն (Ք.ա. 87 թ. հետո)՝ նվաճվեցին Հայոց Տիգրան Բ-ի կողմից և իբրև վասալ թագավորություններ միացան Մեծ Հայքին: Դրա շնորհիվ ժամանակավորապես վերականգնվեց դեռևս Աքեմենյանների օրոք Երվանդականների տիրապետության ներքո գոյություն ունեցող այդ երկրների քաղաքական և հոգևոր-մշակութային միասնությունը, որի արմատները ձգվում են հազարամյակների խորքերը: Սակայն վերականգնված ընդհանրությունը շուտով կրկին խաթարվեց՝ այս անգամ տարածաշրջանի գործերին հռոմեական միջամտության պատճառով: Թեև մեծ դժվարությամբ, ջախջախելով Միհրդատ

Պոնտացուն՝ Հռոմն իր առաջին հարվածը հասցրեց Հայաստանին: Տիգրանը ստիպված էր հեռանալ նվաճած երկրներից:

Դիոնի վկայությամբ, Ք.ա. 69 թ. հռոմեացիներն առաջին անգամ գրոհեցին նաև Կոմմագենեի թագավորության վրա և պաշարեցին Սամոսատը *(Dion Cass. Frag. XXXV.2)*: Սակայն տեղի ունեցավ անսպասելին. հռոմեական ռազմական մեքենան կանգ առավ քաղաքի պարիսպների տակ: Պարիսպների վրայից հռոմեացիների վրա թափվում էր այրվող նյութ, որին նվաճողները ծանոթ չէին: Հռոմեական պատմիչ Պլինիոսը գրում է, որ զինվորները, որոնց վրա թափվում էր այդ հեղուկը, այրվում էին զենքի հետ միասին: Այդ անսովոր զենքը հռոմեացիների մեջ առաջացրեց վախ և խուճապ: Ք.ա. 69 թ. հռոմեացիներին չհաջողվեց նվաճել Սամոսատը, և տեղի ունեցավ հանդիպում Անտիքոս արքայի և հռոմեական կոնսուլ Լուկուլլոսի միջև: Հայտնի չէ, թե ինչ էին նրանք քննարկում, սակայն շատ շուտով հռոմեական լեգեոնները հետ քաշվեցին: Կարելի է ենթադրել, որ Լուկուլլոսը Կոմմագենեում արդյունքի չհասավ: Ուստի Ք.ա. 66 թ. Տիգրանի հետ Արտաշատի պայմանագրի կնքումից *(Appian, Mithr. 106, 114)* հետո նոր հռոմեական զորավար Պոմպեոսն անցավ Տավրոսը և ներխուժեց Կոմմագենե[17], սակայն, կարելի է ենթադրել՝ Պոմպեոսը ևս հաջողության չհասավ և, բավարարվելով Կոմմագենեին Հռոմի դաշնակից պետություն ճանաչելով, կնքեց հաշտություն, որը շատ շահեկան էր Անտիոքոս արքայի համար, և բոլորովին ձեռնտու չէր հռոմեացիներին:

Հատկանշական է, որ Առաջավոր Ասիայում Պոմպեոսի քաղաքական վերափոխումների հետևանքով շատ երկրներ կորցրեցին իրենց անկախությունն ու մտան Հռոմեական պետության կազմի մեջ: Դա առաջին հերթին վերաբերում է Փոքր Ասիային, այդ թվում՝ նախկին Սելևկյան պետությանը, որի տարածքն ամփոփվեց Սիրիա պրովինցիայի կազմի մեջ: Սակայն, հակառակ դրան, Կոմմագենեն ոչ միայն պահպանեց իր ինքնիշխանությունը, այլև ընդլայնեց այն հարևան Միջագետքի որոշ երկրամասերի հաշվին[18], որոնք մինչ այդ մտնում էին Տիգրանի տերության կազմի մեջ: Պոմպեոսի հետ պայմանագիրը կնքվեց թերևս Ք.ա. 64 թ.: Հայաստանի և տարածաշրջանի մի քանի այլ հզոր երկրների պես Կոմմագենեն հայտարարվեց «հռոմեական ժողովրդի դաշնակից և բարեկամ», վերականգնվեցին կոմմագենյան արքայի ինքնիշխանությունն ու նախկին տիտղոսները: Հռոմեացիները կարծես ամեն գնով ձգտում էին սիրաշահել Անտիոքոսին: Դա նախ և առաջ պայմանավորված էր այս և նախորդ

---

[17] «Պոմպեոսն, անցնելով Տավրոսը, պատերազմի բռնվեց Անտիոքոսի հետ, որը Կոմմագենեի թագավորն էր, մինչև Անտիոքոսը չկնքեց իր հետ բարեկամության դաշնագիր, նա պատերազմ սկսեց նաև Դարեհի՝ Մեդիայի թագավորի դեմ, մինչև չստիպեց նրան փախչել, այն բանի համար, որ նա օգնություն է ցույց տվել Անտիոքոսին, իսկ ավելի վաղ՝ Տիգրանին» *(Appian, Mithr. 106)*:

[18] «Նվաճված որոշ ժողովրդների նա թողեց ինքնավար՝ ցուցաբերած ռազմական օգնության համար, մյուսներին ենթարկեց հռոմեացներին, իսկ երրորդներին հանձնեց թագավորներին՝ Տիգրանին տալով Հայաստանը, Փառնակին՝ Բոսպորը, Արիոբարզանին՝ Կապադովկիան և բոլոր այն մարզերը, որոնց մասին ես ասել էի քիչ առաջ: Անտիոքոսին Կոմմագենեից նա տվեց Սելևկիան և Միջագետքի ուրիշ մարզերը, որոնք նա գրավել էր ասպատակության ժամանակ» (նույն տեղում, 114):

պատերազմում Կոմմագենեի թագավորի՝ հռոմեացիներին ցուցաբերած համառ դիմադրությամբ: Ինչպես և Տիգրանի դեպքում, Պոմպեոսը նպատակահարմար չգտավ սրել հարաբերությունները Կոմմագենեի տիրակալի հետ. կար վտանգ, որ տարածաշրջանից Պոմպեոսի լեգեոնների հեռանալուց հետո Անտիոքոսը կրկին կընդվզի, այս անգամ միավորելով ուժերը պարթևների հետ՝ ի չիք կդարձնի հռոմեացիների ձերքբերումներն այս տարածաշրջանում: Սիրաշահելով Կոմմագենեի և Հայոց արքաներին՝ Պոմպեոսը ջանում էր թույլ չտալ վերջիններիս մերձեցումը միմյանց և պարթևների հետ:

Այսպիսով, տարածաշրջանում ստեղծվեց նոր քաղաքական իրավիճակ, որի հետ հաշվի չնստելը հնարավոր չէր: Անջատվելով Մեծ Հայքից՝ Կոմմագենեի տիրակալ Անտիոքոս Ա Կալլինիկոսը սկսեց վարել ինքնուրույն քաղաքականություն, որն ուղղված էր իր (թերևս ոչ ձևական) ինքնիշխանության պահպանմանը և կոմմագենյան Երվանդականներ արքայատան հեղինակության բարձրացմանը: Հատկանշական է, որ Անտիոքոսի «հռոմեասիրությունը» չխանգարեց նրան իր դստերը՝ Լաոդիկեին կնության տալ Հռոմի ամենավտանգավոր ախոյան պարթևաց արքա Հորոդեսին *(Dion Cass., XLIX. 23.)*: Այդ ամուսնությունից ծնվել է պարթևաց թագաժառանգ Պակորոս-Բակուրը՝ հետագայում Հայոց Արտավազդ արքայի փեսան: Սակայն, երբ անհրաժեշտ էր, Անտիոքոսը հաջողությամբ աջակցություն էր ցուցաբերում հռոմեացիներին ընդդեմ պարթև Արշակունիների, որոնց հետ, ինչպես տեսանք, ուներ խնամիական և բարեկամական կապեր: Հայտնի միջադեպ է այն, որ Կիլիկիայում Կիկերոնի նահանգապետության ժամանակ (Ք.ա. 51 թ.) հռոմեական ճամբար ժամանեցին Անտիոքոս Կոմմագենացու պատվիրակները, որոնք կարևոր տեղեկություններ բերեցին Հորոդեսի և Արտավազդ Բ-ի զորքերի առաջխաղացման մասին *(Cic. ad Fam. XV. 1, 3, 4.)*: Հայտնի է նաև, որ Կեսարի և Պոմպեոսի միջև ծագած պատերազմի ժամանակ (Ք. ա. 49 թ.) Անտիոքոսը զորքով ակտիվ աջակցում էր Պոմպեոսին *(Caesar, B. C., III 5; Appian, B. C. II. 49.)*՝ վերջինիս համարելով իր երկրի համար ցանկալի դաշնակից: Ք.ա. 65 թ. Պոմպեոսի հետ կնքած պայմանագրերը և տարածաշրջանում ստեղծված իրադրությունը լավագույնս համապատասխանում էր Կոմմագենեի շահերին և Արևելքում ապահովում կայուն և հավասարակշռված իրավիճակ, մինչդեռ Կեսարն աներկբայորեն այն խախտելու էր: Կարելի ենթադրել նաև, որ Պոմպեոսի նկատմամբ Անտիոքոսի տածած համակրանքը պայմանավորված էր այդ նշանավոր հռոմեական գործչի՝ միհրական լինելու հանգամանքով (Պոմպեոսը թերևս առաջին նշանավոր հռոմեական միհրականն էր):

Այդ ամենը բնորոշում է Անտիոքոսին՝ իբրև ճկուն և հմուտ քաղաքական գործչի, որն իր ինքնիշխանությամբ պարտական լինելով հռոմեացիներին և տիտղոսաշարում ունենալով «հռոմեասեր» *(φιλορώμαιος)* պատվանունը, ելնելով երկրի շահերից՝ կարող էր առանց վարանումների հայտնվել հակադիր ճամբարում: Այդ առումով Անտիոքոս Ա Կալլինիկոսի կերպարն ունի շատ ընդհանրություններ իր ժամանակակից Հայոց

Արտավազդ Բ-ի կերպարի հետ: Վերջինիս պես[19] Անտիոքոս Ա-ն հմտորեն կիրառել է «երրորդ ուժի» քաղաքականությունը: Այդ թագավորի օրոք Կոմմագենեն աննախընթաց զարգացում է ապրել, որի լավագույն դրսևորումներն էին Անտիոքոս արքայի հսկայական հարստությունը և գահակալության տարիներին Կոմմագենեում ծավալված վիթխարի շինարարությունը: Կոմմագենեի քաղաքական ինքնուրույնության և արքայի բարձր հեղինակության մասին է վկայում նաև վերջինիս տիտղոսաշարը՝ վավերացված Նեմրուդ լեռան և Նիմփայոսի Արսամեայի սրբավայրերի արձանագրություններում: Այս վիմագրություններում Անտիոքոսն իրեն հորջորջում է «Մեծ արքա Անտիոքոս Աստված Արդար Հայտնված Հռոմեասեր և Հունասեր, սերած Միթրիդատ Կալլինիկոսից և Լաոդիե Դիցուհի Եղբայրասերից, Անտիոքոս Հայտնված Մայրասեր Հաղթող…» *(ο Αντίοχος Θεός Δίκαιος Επιφανής Φιλορωμαίος Φιλέλλην……):*

Սակայն թեև Անտիոքոսի վարած քաղաքականությունը արդյունավետ էր, այն չէր կարող երկիրը զերծ պահել Հռոմի նոր ոտնձգություններից, քանի որ Կոմմագենեի աշխարհագրական դիրքը նրան էր տալիս ռազմավարական կարևորագույն նշանակություն: Երկիրը Հռոմին ենթարկելու նոր, անհաջող փորձ կատարեց Մարկոս Կրասոսը, որը, սակայն, Ք.ա. 53 թ. պարտություն կրեց պարթևներից և սպանվեց: Հռոմեացիներին չէր կարող չանհանգստացնել այն, որ պարթևաց թագաժառանգ Բակուրը Անտիոքոս Կոմմագենացու թոռն էր և հայ Արտավազդի փեսան: Ձևավորվող պարթևա-հայկական-կոմմագենյան դաշինքը խախտում էր Պոմպեոսի ստեղծած ուժերի դասավորվածությունը և կարող էր հռոմեացիների համար մեծ անախորժությունների պատճառ դառնալ: Սակայն Բակուրի մահը այդ դաշինքը զրկեց հեռանկարից, և այն շուտով կազմալուծվեց:

Անտիոքոսը համառորեն պաշտպանում էր իր երկիրը մեկ այլ «դաշնակից և բարեկամի»՝ Մարկոս Անտոնիոսի նկրտումներից: Ք.ա. 38 թ. եռապետ Անտոնիոսի լեգատ Պուբլիուս Բենտիդիոս Բասսոսը պարթևների դեմ արշավանքի ժամանակ գրոհեց Կոմմագենեի թագավորության վրա: Անտոնիոսը Անտիոքոսին մեղադրում էր պարթևների հետ գաղտնի համագործակցելու և Բակուրին օժանդակելու համար: Սակայն դրան, անշուշտ, պետք է ավելացնել ևս երկու կարևոր շարժառիթներ. Անտոնիոսի սնանկ վիճակը և տարածաշրջանում հայտնի՝ Կոմմագենեի թագավորի հսկայական նյութական հարստությունը: Գիտակցելով այդ՝ Անտիոքոսն առաջարկեց Անտոնիոսին խաղաղություն և 1000 տաղանդ (համարժեք է 25 տոննայի) արծաթ: Սակայն Անտոնիոսին այդքանը քիչ թվաց: Նա համոզված էր, որ շուտով և հեշտությամբ կտիրանա Կոմմագենեի ողջ հարստությանը և իր ճակատը կզարդարի Կոմմագենեի տիրակալին հաղթողի պսակով: Նա թերագնահատեց հակառակորդին և պատերազմի սկզբնական շրջանում անձամբ չմասնակցեց ռազմական գործողություններին՝ իր փոխարեն զորքի հրամանատար կարգելով իր զորավար Բենտիդիոս Բասսոսին: Ինքն՝ Անտոնիոսը մնաց Տարսոնում, ուր, ինչպես հայտնում են աղբյուրները, Ք.ա. 38 թ. իրեն տեսակցելու էր եկել Կլեոպատ-

[19] **Մանասերյան Ռ.,** Հայաստանը Արտավազդից մինչև Տիգրան Մեծ, Ե., 1997, էջ 71-72, 213:

բան: Սակայն շուտով Կոմմագենեից սկսեցին գալ տագնապալից լուրեր՝ Սամոսատը պաշարած Բասսոսին հետապնդում էին անհաջողությունները: Ձախողումներից բարոյազրկված զորքին գոտեպնդելու համար Անտոնիոսն ստիպված ինքը ժամանեց Սամոսատ և ստանձնեց հրամանատարությունը: Շուտով նրան միացավ կոմմագենյան Երվանդականների վաղեմի մրցակից և ախոյան Հուդայի արքա Հերովդեսը[20]: Վերջինս մեծ եռանդով անցավ գործի՝ հույս ունենալով գրավել Սամոսատի անառիկ պարիսպները, բայց ապարդյուն: Հռոմեացիներն ու հրեաներն, ըստ էության, պարտվեցին[21]: Ի վերջո, Անտոնիոսը ստիպված եղավ նահանջել՝ Անտիոքոսի հետ հաշտության պայմանագիր կնքելով: Կոմմագենեն պահպանեց իր սուվերենությունը և մնաց «հռոմեական ժողովրդի դաշնակից ու բարեկամ», Անտիոքոսը խոստացավ այլևս չօգնել պարթևներին և վճարեց ընդամենը 300 տաղանդ, նախկինում առաջարկած 1000-ի փոխարեն *(Dion Cass., XLIX. 20-22; Plut., Ant. 34)*: Հերթական անգամ ձախողված Անտոնիոսը ստիպված եղավ բավարարվել այդքանով, ավելին. նա ստիպված եղավ պարթևների դեմ արշավանքը հետաձգել մեկ տարով: Հաջորդ տարվա արշավանքի ժամանակ ևս Անտոնիոսը պարտվեց և իր պարտության մաղձը թափեց հայ Արտավազդի վրա, որն Անտոնիոսի կողմից և Ք.ա. 31 թ. մահապատժի ենթարկվեց: Հատկանշական է, որ մոտավորապես այդ ժամանակվանից մենք այլևս հիշատակությունների չենք հանդիպում նաև Անտիոքոս Ա-ի մասին: Ստույգ հայտնի չէ, թե ե՞րբ և ի՞նչ պարագաներում է մահացել Անտիոքոսը, սակայն դա տեղի է ունեցել ոչ ուշ, քան Ք.ա. 31 թ.: Անտիքոս Ա-ի մահվանից, ինչպես և Արտավազդ Բ-ի գահընկեցությունից հետո Կոմմագենեում, Մեծ Հայքում իշխող արքայատոհմը սկսեց անկում ապրել և ի վերջո մարեց: Քիչ ժամանակ անց երկիրը կորցրեց իր անկախությունը և վերածվեց սովորական հռոմեական պրովինցիայի:

---

[20] «Հրեական պատերազմում» այդ անցքերը նկարագրելով՝ Հովսեպոս Փլավիոսը հայտնում է, թե, իբրև, Հերովդեսին հաջողվել է նվաճել Սամոսատը, մի բան, որ չի հաստատվում մյուս հեղինակների կողմից: Հրեա պատմիչը Հերովդեսին վերագրում է սխրանքներ, որ նա երբեք չի գործել: «Լսած լինելով, որ սա մեծ զորքով հարձակվել է Սամոսատի վրա, որը ամրացած քաղաք է Եփրատի մոտ, արագացրեց իր ընթացքը, ժամանակը պատեհ համարելով իր քաջությունը ցուցադրելու, առավել ևս Անտոնիոսին հաճոյանալու համար: Նրա ժամանումից հետո վերջացավ պաշարումը: Բարբարոսներից շատերին նա սպանեց և մեծ քանակությամբ ավար ապահովեց, որով և Անտոնիոսը, որը նախապես ևս հիանում էր նրա առաքինությամբ, այժմ ավելի է հարգում նրան և հուսադրում գահակալման մասին, մինչդեռ Անտիոքոս թագավորը ստիպված եղավ հանձնել Սամոսատը» (321-322):

[21] Հետազոտողների մեծ մասը, Փլավիոսի տեղեկությունները համարելով կողմնակալ և ոչ արժանահավատ, ավելի հավաստի է համարում Դիոնի հայտնած տվյալները, որոնց վրա էլ մենք հենվել ենք: «Այս բոլորը, սակայն, տեղի ունեցան որոշ ժամանակ հետո, իսկ այնժամ Անտոնիոսը հարձակվեց Անտիոքոսի վրա և փակելով նրան Սամոսատում, պաշարեց; Եվ քանի որ ոչ մի հաջողություն չունեցավ, ու ժամանակն էլ իզուր կորչում էր, իսկ ինքն էլ կասկածեց, որ զինվորներն իրենից օտարանում են Վենտիդիոսին պատվազրկած լինելու պատճառով, գաղտնի բանակցություններ սկսեց Անտիոքոսի հետ և շինծու հաշտություն հաստատեց, որպեսզի արժանավայել ձևով հեռանա: Եվ, իհարկե, նա ոչ պատանդներ վերցրեց, բացի երկու հոգուց, այն էլ ոչ երևելիներից, ոչ իսկ իր պահանջած փողերն ստացավ» *(Dion Cass. XXIX, 22, 1)*:

ИЗ ИСТОРИИ КОММАГЕНЫ И СОФЕНЫ В ЭПОХУ ЭЛЛИНИЗМА

МАРГАРЯН Е. Г.

Резюме

Коммагена – небольшая гористая страна на правом берегу Евфрата в непосредственном соседстве с Великой Арменией. В период урартийского доминирования в регионе Куммух-Коммагена некоторое время входила в состав Ванского царства. Позднее, в эпоху Ахеменидов эта страна была включена в XIII сатрапию и оставалась в ее составе вплоть до походов Александра Великого. После падения державы Ахеменидов Коммагена еще более полувека входила в состав Великой Армении. Даже после отделения Коммагены и Софены от Великой Армении в этих странах лишь с небольшими перерывами продолжала править одна из побочных ветвей династии армянских Ервандаканов. Среди эллинистических стран Коммагена занимает особое место в регионе. Благодаря выгодному географическому расположению, Коммагена на протяжении почти всей своей истории была одной из экономически наиболее развитых и богатых стран. Правители Коммагены контролировали торгово-транспортные артерии, проходящие через территорию страны. На главном перекрестке торговых путей коммагенские Ервандаканы основали свою столицу – богатый и цветущий город Самосату, который наряду с экономическим имел также важное стратегическое значение. Наивысшего развития страна достигла в I в. до Р.Х. – в годы правления Митридата I и его выдающегося сына Антиоха I Каллиника, известного своими монументальными сооружениями, построенными во славу правящей династии Ервандаканов и покровительствующего им богу Митре. Антиох I, подобно своему современнику Артавазду II, успешно проводил политику “третьей силы”, балансируя между сильнейшими державами региона во имя сохранения политического и культурного суверенитета своей страны. Однако после его смерти давление Рима на Коммагену усилилось, и она, потеряв былую силу , славу, сошла с пол, т, ческой арены, преврат, вш, сь в обычную р, мскую пров, нц, ю.